



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 02/2025-Ա/Վ

ՀԱԿՈՐ ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

13 հոկտեմբերի 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 15-ին հարուցված թիվ 02/2025-Ա/Վ վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑ

I. Նախապայմանություն

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումների հիման վրա իրականացված ուսումնասիրության, այդ թվում՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի կողմից Հանձնաժողով ներկայացրած 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) տվյալների ստուգման արդյունքում պարզել է հետևյալը՝

1. Հայտարարագրի ուսումնասիրության և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում առկա տվյալների համաձայն՝ Հակոբ Շահգալդյանը 1998 թվականի

փետրվարի 25-ից մինչև 2025 թվականի ապրիլի 11-ը հանդիսացել է «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը:

2. 2024 թվականի օգոստոսի 15-ին Հակոբ Շահգալոյանը քաղաքացի Արա Հրանտի Մխիթարյանի հետ կնքել է շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերությունում ունեցած իր 100% բաժնեմասը 3 տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել Արա Հրանտի Մխիթարյանին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 07-ին N 01/1001-2024 գրությամբ դիմել է Հակոբ Շահգալոյանին՝ պահանջելով ներկայացնել պարզաբանում՝ պայմանագրի՝ ֆիզիկական անձի հետ կնքման առնչությամբ, ինչպես նաև տեղեկատվություն՝ «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալում Հակոբ Շահգալոյանի բաժնեմասի՝ հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ առկա պայմանագրեր կամ պայմանագրի փոփոխությունների վերաբերյալ:

Նշված գրությանն ի պատասխան՝ 2025 թվականի մարտի 27-ին N Մ-1788-2025 գրությամբ Հանձնաժողով է մուտքագրվել Հ. Շահգալոյանի պարզաբանումը: Հ. Շահգալոյանը նշել է, որ 2024 թվականի օգոստոսի 15-ին ՀՀ քաղաքացի Արա Հրանտի Մխիթարյանի հետ կնքել է նոտարի սեղանամատյանի 7093 համարով շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով վերջինիս երեք տարի ժամկետով կառավարման է հանձնել իր բաժնեմասն ամբողջությամբ: Վերջինս նաև նշել է, որ նշված պայմանագիրը թեև կնքվել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի հետ, և առերևույթ առկա է հավատարմագրային կառավարչին առաջադրված պահանջների անհամապատասխանություն, այնուամենայնիվ, հավաստել է, որ «Հակոբ Շահգալոյան» ՍՊԸ-ի բաժնեմասը փաստացի կառավարվել և կառավարվում է պայմանագրով հավատարմագրային կառավարիչ նշանակված Արա Մխիթարյանի կողմից, և ինքը որևէ կերպ չի առնչվել և չի առնչվում կառավարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 15-ին կայացրել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 02/2025-Ա/Վ որոշումը:

2025 թվականի հուլիսի 15-ին թիվ 01/2803-2025 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Հակոբ Շահգալոյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի հուլիսի 21-ին թիվ Մ-4568-2025 գրությամբ Հակոբ Շահգալոյանը պարզաբանում է ներկայացրել վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ.

«... 1998 թվականի փետրվարի 25-ից մինչև 2025 թվականի ապրիլի 11-ը հանդիսացել եմ «Հակոբ Շահգալոյան» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատերը:

«Հակոբ Շահգալոյան» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ինձ պատկանող 100% բաժնեմասը (Բաժնեմաս) հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ կնքել եմ շարժական գույքի հավատարմագրային կառավարման երկու պայմանագիր, որոնցից յուրաքանչյուրին կանդրադառնամ ստորև:

Առաջին պայմանագրի վերաբերյալ.

Հանդիսանալով Չարենցավան համայնքի ղեկավար, 2021թ. օգոստոսի 17-ին, ՀՀ քաղաքացի Արա Հրանտի Մխիթարյանի հետ կնքել եմ նոտարի սեղանամատյանի 7836 համարով շարժական գույքի հավատարմագրային պայմանագիրը (պատճենը կցվում է), որով վերջինիս երեք տարի (մինչև 17.08.2024թ.) ժամկետով հավատարմագրային կառավարման եմ հանձնել Բաժնեմասն ամբողջությամբ: Նշված պայմանագիրը կնքված է դրա կնքման պահին գործող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն, ընդունված 23.03.2018թ.) պահանջներին համապատասխան, որի այդ պահին գործող 31 հոդվածի խմբագրության համաձայն (11-րդ մաս)՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը:

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի նոր խմբագրությամբ (ՀՕ 540-Ն օրենք, ընդունված 23.12.2022թ.) հավատարմագրային կառավարիչ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները: Մինչդեռ, օրենքի նշված դրույթն ուժի մեջ մտնելուց առաջ Բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրն արդեն կնքված էր և գործում էր 2021թ. օգոստոսի 17-ից սկսած: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438 հոդվածի 2-րդ մասի՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա: 23.12.2022թ. ընդունված ՀՕ 540-Ն օրենքը, որով հավատարմագրային կառավարիչ լինելու համար սահմանվել է անհատ ձեռնարկատիրոջ կամ առևտրային կազմակերպության պահանջ, որևէ դրույթ չի սահմանվել դրա գործողությունը նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա տարածվելու վերաբերյալ: Ուստի 2021թ. օգոստոսի 17-ին կնքված շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, ՀՕ-540-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, նույն պայմաններով պահպանել է իր ուժը:

Երկրորդ պայմանագրի վերաբերյալ.

Հանդիսանալով Չարենցավան համայնքի ղեկավար, 2024թ. օգոստոսի 15-ին ՀՀ քաղաքացի Արա Հրանտի Մխիթարյանի հետ կնքել եմ նոտարի սեղանամատյանի 7093 համարով շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր (պատճենը կցվում է), որով վերջինիս երեք տարի ժամկետով հավատարմագրային կառավարման եմ հանձնել Բաժնեմասն ամբողջությամբ: Նշված պայմանագիրը թեև կնքվել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի հետ և առերևույթ առկա է հավատարմագրային անհամապատասխանություն (Օրենքի 31-րդ հոդված), այնուամենայնիվ հայտնում և պահանջների հավաստում եմ, որ՝

«Հակոբ Շահգալդյան» ՍՊԸ-ի իմ բաժնեմասը փաստացի կառավարվել է պայմանագրով հավատարմագրային կառավարիչ նշանակված Արա Հրանտի Մխիթարյանի կողմից:

Ես որևէ կերպ չեմ առնչվել և չեմ առնչվում «Հակոբ Շահգալոյան» ՍՊԸ-ի կառավարմանը:

«Հակոբ Շահգալոյան» ՍՊԸ-ն իր գործունեության ընթացքում երբևիցե մասնակցություն չի ունեցել ո՛չ պետական, և ո՛չ էլ համայնքային գնումների որևէ գործընթացի:

2025 թվականի մարտի 27-ին Հանձնաժողովին ուղարկված պարզաբանման մեջ հանձն եմ առել տասնհինգօրյա ժամկետում ուղղելու (վերացնելու) «Հանրային ծառայության մասին» օրենքի վերոգրյալ անհամապատասխանությունը և դրա վերաբերյալ համապատասխան հիմքերը սույն թվականի ապրիլի 11-ին ներկայացրել եմ Հանձնաժողովին, ինչի վերաբերյալ կցում եմ հավատարմագրային կառավարման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիրը (առ՝ 03.04.2025թ.) իրական սեփականատիրոջ փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև «ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼՂՅԱՆ» ՍՊԸ-ի կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ, ըստ որի 2025 թվականի ապրիլի 11-ից Ընկերության 100 % բաժնեմասը փոխանցել եմ որդու՝ Վարդան Շահգալոյանին:

Տեղեկացնում եմ, որ որևէ դիտավորություն չեմ ունեցել շարժական գույքի հավատարմագրային կառավարումը ֆիզիկական անձին հանձնելը, այլ ոչ թե անհատ ձեռնարկատիրոջը կամ առևտրային կազմակերպությանը:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ Հանձնաժողովին իմ կողմից անհամատեղելիության պահանջի խախտումը համարել անուշադրության արդյունք:»:

III. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործունեությանն առնչվող տեղեկություններ

Չարենցավանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջի տվյալների համաձայն՝ Հակոբ Շահգալոյանը ստանձնել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար պաշտոնը 2022 թվականի սեպտեմբերի 25-ից և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Հակոբ Շահգալոյանը Չարենցավանի քաղաքապետի պաշտոնն զբաղեցնում է 2007 թվականի հունվարից, համայնքի ղեկավարի պաշտոնը՝ 2017

թվականից: 2022 թվականի սեպտեմբերի 25-ի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով վերընտրվել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի պաշտոնում՝ «Միասնական համայնք» դաշինքի ցուցակով:

2. Հակոբ Շահգալոյանը 1998 թվականի փետրվարի 25-ից մինչև 2025 թվականի ապրիլի 11-ը հանդիսացել է «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը:

3. 2024 թվականի օգոստոսի 15-ին Հակոբ Շահգալոյանը քաղաքացի Արա Հրանտի Մխիթարյանի հետ կնքել է շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերությունում ունեցած իր 100% բաժնեմասը 3 տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ Արա Հրանտի Մխիթարյանին:

4. Հակոբ Շահգալոյանի կողմից 2025 թվականի մարտի 27-ին Հանձնաժողով է ներկայացվել հավատարմագրային կառավարման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիրը (առ՝ 03.04.2025), ընկերության կանոնադրության փոփոխությունը/ հավելվածը, որով արձանագրվում է մասնակցության փոփոխությունը և գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության վերաբերյալ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքը:

5. 2025 թվականի ապրիլի 11-ից Ընկերության 100 % բաժնեմասը փոխանցվել է Հակոբ Շահգալոյանի որդուն՝ Վարդան Շահգալոյանին, ով նույն ամսաթվից հանդես է գալիս նաև որպես գործադիր մարմնի ղեկավար:

6. Հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 01/3398-2025 գրությանն ի պատասխան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2025 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 70-19/55911-2025 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի նոյեմբեր ամսվանից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 3-ն (հարցման պատասխանի ստացման ամսաթիվ) ընկած ժամանակահատվածում Ընկերությունն ապահովել է իրացման շրջանառություն և հարկային պարտավորությունների մասով կատարել է վճարներ պետական բյուջե:

V. Անհամապեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

2. Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

3. Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային քաղաքական պաշտոններն են **համայնքների ղեկավարների** և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

4. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

5. Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

6. Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունն իրականացնելը,

2) անհատ ձեռնարկատեր լինելը,

3) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել են հավատարմագրային կառավարման, կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

7. Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում

հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

8. Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն (ուժի մեջ է մտել 17.06.2024թ.)՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել՝

1) սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված **անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները.**

2) բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

9. Նույն հոդվածի 11.1-ին մասի համաձայն՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

10. Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ **փոխկապակցված անձինք են** պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

11. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետի (սույն իրավակարգավորումը ուժի մեջ է մտել 02.01.2023թ.-ին) համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվում են **տեղեկություններ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:**

12. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքների ղեկավարների,** նրանց

տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը**:

13. Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել սեփական նախաձեռնությամբ:

14. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների**, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, (...) առկայության պարագայում **հարուցում է համապատասխան վարույթ**:

15. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

16. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին (...):

17. Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում) (...):

V. Հանձնաժողովի պարզառաքանություններն ու եզրահանգումը

Համայնքի ղեկավարի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջները, այդ թվում՝

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ինչպես նաև առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու, հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Ի թիվս այլնի՝ անհամատեղելիության պահանջներից բխում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ունենալ բաժնեմաս կամ մասնակցություն առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում:

Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

Թեև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պահանջը կրում է իմպերատիվ բնույթ, այդուհանդերձ, նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքը, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է՝ պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում** առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման՝ դրանով իսկ ապահովելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը, ինչպես նաև բացառելով վերջիններիս մոտ շահերի բախման հնարավոր իրավիճակները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների չպահպանումը, մասնավորապես պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն ինքնին հանգեցնում է գործարար ոլորտի և հանրային ծառայության սերտաճման,

ինչպես նաև շահերի հնարավոր բախման, երբ պաշտոնատար անձը կարող է իր պաշտոնական դիրքն օգտագործել անձնական կամ տնտեսական օգուտներ ստանալու նպատակով: Այս դիսկը բացառելու նպատակով Օրենքը նախատեսում է, որ, ի թիվս այլնի, պաշտոնատար անձը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում: Հենց այդ պատճառով է սահմանվել բաժնեմասի հավատարմագրային կառավարման ինստիտուտը, որի նպատակը պաշտոնատար անձին զերծ պահելն է ձեռնարկատիրական գործունեությունից: Այս համատեքստում բաժնեմասի փոխանցումը որոշակի կառավարման սուբյեկտի թույլ է տալիս ապահովել կառավարման թափանցիկություն, վերահսկելիություն և պատասխանատվություն՝ դրանով իսկ կանխելով գործարար ոլորտի և հանրային ծառայության սերտաճումը: Մինչդեռ, ֆիզիկական անձի կողմից բաժնեմասի կառավարումը չի ապահովում անհրաժեշտ անկախություն և վերահսկելիություն, առնվազն այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձը կարող է լինել պաշտոնատար անձին փոխկապակցված անձ և փաստացի կառավարվել պաշտոնատար անձի կողմից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի նախկին խմբագրության (<Օ-206-Ն, ընդունված 23.03.2018թ.) 31-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հավատարմագրային կառավարիչ կարող էին հանդիսանալ նաև ոչ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ Օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով ամրագրված կարգավորումները, ըստ էության չէին լուծում իրենց առջև դրված խնդիրը, այն է՝ չէին ապահովում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը:

Հարկ է նշել, որ աշխարհի մի շարք երկրներ նշված խնդրից խուսափելու համար ներդրել են, այսպես կոչված, «կույր» հավատարմագրային կառավարման կառուցակարգ: Հավատարմագրային կառավարման սույն մեխանիզմի պարագայում առկա են որոշակի պարտադիր պայմաններ: Պայմաններից թերևս ամենակարևորը կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև փոխկապակցվածության և միասնական շահի բացակայությունն է: Մյուս կարևոր

պայմանը հանդիսանում է այն, որ հավատարմագրային կառավարման հիմնադիրը չպետք է որևէ կերպով միջամտի հավատարմագրային կառավարման գործընթացին:

Ներկայացված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով էլ փոփոխվել և լրացվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան հոդվածը, որի նպատակը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումն է, ինչպես նաև կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև փոխկապակցվածության և միասնական շահի բացակայության ապահովումը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու, մասնավորապես՝ հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը նախատեսել է, որ հավատարմագրային կառավարիչներ կարող են լինել այնպիսի սուբյեկտներ, որոնք ունեն որոշակի կարգավիճակ, մասնավորապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները, իսկ բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և ունեն հաշվետվականության, վերահսկելիության, ինչպես նաև պետական գրանցման մեխանիզմներ, ինչն ապահովում է գործունեության թափանցիկություն, ինչպես նաև նվազեցնում է շահերի բախման վտանգը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կառավարման սուբյեկտի գործունեությունը ենթակա է հարկային և ֆինանսական վերահսկողության: Մինչդեռ, Ֆիզիկական անձի նկատմամբ նման ինստիտուցիոնալ վերահսկողություն չկա, առնվազն այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձի դեպքում առկա է անձնական կապերի ազդեցության բարձր ռիսկ, ինչի հետևանքով պաշտոնատար անձը կարող է պահպանել փաստացի վերահսկողություն իր բաժնեմասի նկատմամբ:

Այսինքն, Օրենքով նախատեսված է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձին պատկանող բաժնեմասը կարող է փոխանցվել հավատարմագրային կառավարման միայն Օրենքով սահմանված հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող կառավարման սուբյեկտի:

Օրենքի վերոնշյալ իրավակարգավորումն ինքնանպատակ չէ, այն ուղղված է առևտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասերի նկատմամբ պետական պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքի կարգավորմանը՝ թափանցիկության ապահովման, շահերի բախման կանխարգելման և հանրային վստահության պահպանման համատեքստում:

Վերլուծելով սույն գործով կիրառելի օրենսդրական կարգավորումները, պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետ՝ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջի պահպանմամբ կառավարման հանձնելու համար և տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով: Այսինքն, օրենսդիրը սահմանել է պայմաններ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպությունում մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեություն չհամարելու համար: Մասնավորապես, երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և պաշտոնի նշանակվելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է Օրենքով սահմանված՝ **հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների պահպանմամբ հավատարմագրային կառավարման:**

Քննարկվող դեպքում, Հակոբ Շահգալոյանը, 2022 թվականից զբաղեցնելով համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսացել է «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը և 2024 թվականի օգոստոսի 15-ին կնքել է շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որի համաձայն՝ «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերությունում իր ունեցած 100% բաժնեմասը 3 տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ Արա Հրանտի Մխիթարյանին, որի արդյունքում թույլ է տվել

Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում, հաշվի առնելով, որ Ընկերության հավատարմագրային կառավարիչ է հանդիսացել Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձը:

Այսինքն՝ Օրենքի համատեքստում խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա դրսևորվել է Հակոբ Շահգալոյանի կողմից պաշտոն ստանձնելուց հետո Ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջի խախտմամբ հավատարմագրային կառավարման հանձնելով:

Հանձնաժողովն, անդրադառնալով Հակոբ Շահգալոյանի կողմից վկայակոչած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածով ամրագրված նորմին, փաստում է, որ 2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքը, որով, ի թիվս այլնի, փոփոխվել և լրացվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասը, որը կիրառելի է բոլոր այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են նրա ուժի մեջ մտնելուց հետո: Տվյալ դեպքում Հակոբ Շահգալոյանը ֆիզիկական անձի հետ հավատարմագրային կառավարման պայմանագիր է կնքել 2024 թվականի օգոստոսի 15-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ օրենքն արդեն իսկ ուժի մեջ էր մտել, հետևաբար վերջինիս վկայակոչած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ Հակոբ Շահգալոյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է ոչ թե 2021 թվականի օգոստոսի 17-ին կնքված պայմանագրի համար, այլ՝ 2024 օգոստոսի 15-ին կնքված պայմանագրի:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն դեպքում կարևորվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում **հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջը**, որը հանդիսացել է, Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձը, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ առևտրային

կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել՝ քննարկվող դեպքում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված **անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները:**

Հաշվի առնելով ներկայացված փաստական տվյալները և իրավական նորմերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ շահերի հնարավոր բախման բացառումն ու անհամատեղելիության պահանջների կատարումը կարող են ապահովվել միայն այն դեպքում, երբ պաշտոնատար անձի բաժնեմասը կամ մասնակցության իրավունքը հավատարմագրային կառավարմամբ փոխանցվում է համապատասխան կառավարման սուբյեկտի: Քանի որ միայն այդ դեպքում է ապահովվում կառավարման ինստիտուցիոնալ անկախությունը և հաշվետվողականությունը՝ հաշվի առնելով Օրենսդրի պահանջն առ այն, որ այդ կառավարման սուբյեկտներն օրենքով սահմանված կարգով հաշվառված են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնելու համար, մինչդեռ ֆիզիկական անձի կողմից կառավարման դեպքում չի ապահովվում անհրաժեշտ անկախություն, թափանցիկություն և վերահսկելիություն, ինչի հետևանքով պահպանվում է պաշտոնատար անձի ազդեցությունը բաժնեմասի կառավարման գործընթացում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտոնատար անձը կարող է պահպանել իր վերահսկողությունը՝ բարեկամական, ընկերական կամ այլ կապերի միջոցով:

Ընդ որում, էական է ընդգծել, որ Օրենսդրի նման պահանջը բխում է հանրային ծառայության համակարգում անաչառության և շահերի բախման կանխարգելման անհրաժեշտությունից այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձը չունի այնպիսի անկախության և հաշվետվողականության երաշխիքներ, որոնք կբացառեն համայնքի ղեկավարի ազդեցությունը կառավարվող բաժնեմասի նկատմամբ: Հետևապես, օրենսդրական պահանջից հետևում է, որ նման կառավարման փոխանցումը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված **անհատ ձեռնարկատերերի կամ առևտրային կազմակերպությունների միջոցով:**

Բացի այդ, սույն դեպքում Հանձնաժողովը կարևորում է նաև այն փաստական տվյալը, որ բաժնեմասը հավատարմագրային կառավարմանը հանձնելը կարող էր դիտվել որպես անհամատեղելիության պահանջի խախտումը բացառելու միջոց, սակայն տվյալ դեպքում այն չի ապահովել օրենքի նպատակը, քանի որ **Ընկերությունը շարունակել է գործել և ունեցել է իրացման շրջանառություն**: Այսինքն՝ Ընկերությունը, որի բաժնեմասը թեև հանձնվել է հավատարմագրային կառավարման Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձին և այդ Ընկերությունը շարունակել է ունենալ իրացման շրջանառություն և փաստացի իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն վկայում է այն մասին, որ պաշտոնատար անձը պաշտոնավարման ընթացքում փաստացի պահպանել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կարգավիճակը: Նման պարագայում պահպանվում է տնտեսական շահագրգռվածությունը և իրական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա, ինչն ըստ էության հակասում է հանրային ծառայողների համար սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին:

Վերոգրյալի հաշվառմամբ հիմք ընդունելով կիրառելի իրավական նորմերը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի պահանջը իմպերատիվ բնույթի է, հետևապես հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնումը ֆիզիկական անձի անթույլատրելի է:

Ըստ այդմ, Հանձնաժողովը փաստում է, որ համայնքի ղեկավարի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ սահմանված անհամատեղելիության պահանջները ուղղված են ոչ միայն համայնքի ղեկավարի գործունեության թափանցիկությանն ու անաչառությանը, այլև համայնքային իշխանության նկատմամբ հանրային վստահության ապահովմանը: Հետևապես, առևտրային կազմակերպություններում բաժնեմասերի նկատմամբ հավատարմագրային կառավարման ինստիտուտի նպատակը համայնքի ղեկավարի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի պահպանումն է, ինչը հանդիսանում է շահերի հնարավոր բախման կանխարգելման և հանրային վստահության պահպանման կարևորագույն գործառույթ:

Հանձնաժողովը, գնահատման առարկա դարձնելով նաև Հակոբ Շահգալոյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող ընկերության 100 տոկոս բաժնեմասը, 2025 ապրիլի ընթացքում Վարդան Շահգալոյանին օտարելու հանգամանքը, անհրաժեշտ է համարում նշել, որ պաշտոնատար անձանց նկատմամբ վերոնշյալ իրավանորմերով սահմանված ձեռնարկատիրական գործունեության զբաղվելու արգելքը կրում է իմպերատիվ բնույթ: Հետևաբար, երբ պաշտոնատար անձը արդեն իսկ թույլ է տվել խախտումը՝ չպահպանելով օրենքի պահանջը՝ հանդիսանում է անհամատեղելիության պահանջների խախտում թույլ տված անձ, անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ այդ պահին բաժնեմասը, այնուամենայնիվ, արդեն օտարել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական որևէ հայեցողական լիազորություն՝ իրականացրել որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետազայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացրել նույն ձևով:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ Հանձնաժողովի կողմից 2 եզրակացություններով հաստատված փաստական հանգամանքների միջև էական տարբերություն առկա չէ:

Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Հակոբ Շահգալոյանի կողմից բովանդակային առումով խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված 2021 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 03/2021-Ա/Վ և 2024 թվականի մարտի 11-ի թիվ 02/2022-2024-Ա/Վ եզրակացություններին, որոնցով արձանագրել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայություն՝ որպես պատճառաբանություն նշելով, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որոշակի ժամանակում արդեն իսկ դրսևորել է անգործություն՝ չպահպանելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու

արգելք սահմանող իրավանորմը՝ հանդիսանում է անհամատեղելիության պահանջի խախտում թույլ տված անձ, անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ պահի բաժնեմասը, այնուամենայնիվ օտարում է կամ հանձնում է հավատարմագրային կառավարման:

Հանձնաժողովը հարկ է համարում Հակոբ Շահգալոյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ Օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի նշված արարքները անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

Ընդ որում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն իրողությունը, որ իր կողմից նախորդիվ կայացրած եզրակացություններով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական արգելք սահմանող իրավանորմի պահանջների առնչությամբ արձանագրվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բովանդակային խախտումների բացակայություն այն հանգամանքների հաշվառմամբ, որ վարույթի ընթացքում իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված են համարվել այն փաստական տվյալները, որոնց համաձայն՝ գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում փաստացի ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացվել, ինչպես նաև իրացման շրջանառություն և շահույթ չի ստացվել: **Մինչդեռ, սույն գործով իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված է համարվում Ընկերության փաստացի գործունեություն ծավալելու, ինչպես նաև իրացման շրջանառություն ունենալու հանգամանքը**, ինչն ըստ էության վկայում է տնտեսական գործունեության շարունակականության մասին: Նշված հանգամանքը փաստացի հիմք է տալիս արձանագրելու, որ Հակոբ Շահգալոյանը շարունակել է փաստացի իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, ինչը հակասում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջներին: Այսպիսով, բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնումը Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձին չի բացառել Հակոբ Շահգալոյանի իրական տնտեսական շահերի առկայությունը և վերջինիս գործնական մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեությանը:

Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Հակոբ Շահգալոյանի կողմից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է***, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Հակոբ Շահգալոյանն իր գործողություններով չի պահպանել Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ